ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5706-Ա « 24 » նոյեմբերի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի Հ.3556-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Մարիետա, Թեհմինե և Սարգիս Պետրոսյանների լ/ա Արթուր Հայրապետյանի դիմումը՝ Երևանի քաղաքապետի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի հ.3556-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին հ.Կ-15052025-01-0032 որոշումը: Երևանի քաղաքապետի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի հ.3556-Ա որոշման հիման վրա Հաղթանակ հատված 23 թիվ 8 հասցեի նկատմամբ իրականացվել է իրավունքների պետական գրանցում /28032024-01-0179/:

Հաղթանակ հատված 23 թիվ 8ա հասցեում գտնվող՝ 01-007-0163-0003, 01-007-0163-0002 կադաստրային ծածկագրերով հողամասը Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծում ամրագրված պայմանական նշանների համաձայն գտնվում է բնակավայրերի խառը կառուցապատման հողերի գոտում:

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Դ-74805-26 ևՆ/74544-26 եզրակացությունները.

1.Երևանի քաղաքապետի 2023 թվականի հոկտեմբերի 31-ի «Հաղթանակ հատված 23 թիվ 8 և Հաղթանակ հատված 8ա հասցեներում գտնվող հողամասի սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին» հ.3556-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման վերնագիրը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«Հաղթանակ հատված 23 թիվ 8 և Հաղթանակ հատված 23 թիվ 8ա հասցեներում գտնվող հողամասի սահմանները ճշտելու, հատակագիծ թողարկելու, Հաղթանակ

հատված 23 թիվ 8ա հասցեում գտնվող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները սահմանելու մասին».

2) Որոշման ամբողջ տեքստում «Հաղթանակ հատված 8ա» բառերը փոխարինել «Հաղթանակ հատված 23 թիվ 8ա» բառերով:

3) Որոշումը լրացնել նոր 1.1 և 1.2 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

« 1.1 Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի ի.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ Հաղթանակ հատված 23 թիվ 8ա հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը /կատեգորիան/ սահմանել բնակավայրերի, իսկ գործառնական նշանակությունը /օգտագործման նպատակը/՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի ի.1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ բնակելի կառուցապատման:»:

« 1.2 Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման հիման վրա Հաղթանակ հատված 23 թիվ 8ա հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակության փոփոխման իրավունքի պետական գրանցումը ենթակա է իրականացման այդ պահին հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի տարբերության գումարը սեփականատիրոջ կողմից վճարված լինելու դեպքում:»:

4) Որոշման 2-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

« 2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում՝ համաձայն կից ներկայացված նախագծման թույլտվության /ճարտարապետահատակագծային առաջադրանքի/:»:

2. Սահմանել, որ Հաղթանակ հատված 23 թիվ 8ա հասցեում գտնվող հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով՝ չեղյալ համարելով հողամասի նախկինում 31.10.2023թ. ի.3556-Ա որոշման հիման վրա թողարկված հատակագիծը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ